

ԱՐԴԻ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ  
Ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

*«Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր  
Ս. Հարությունյանի հարցազրույցը Հ. Ա. Գևորգյանի հետ*

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Ամբակունյի Գևորգյանը (Տեր-Գևորգյան) ծնվել է Երևանում 1927 թ. հուլիսի 10-ին, սովորել է Թիֆլիսի հայկական դպրոցներում, 1944-ին ավարտել է Երևանի Մոսկվայի անվան ռուսական դպրոցը, 1944–45-ին սովորել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանում, ապա՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որն ավարտել է 1950 թ.: 1955-ին ավարտել է ԳԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Աբստրակցիայի դերը իմացության մեջ» թեմայով: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հավանական և հավաստի գիտելիք» թեմայով, որն ամփոփում էր համանուն գրքի և նրան հարող տասնյակ հրապարակումների թեզերը: 1972-ին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 1996-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:



Նրա հարցազրույցը 1956-ից ցայսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում. եղել է, հաջորդաբար, ԳԱ փիլիսոփայության սեկտորի իմացաբանության թեմատիկ խմբի, ինստիտուտի դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական հարցերի բաժնի վարիչ, գիտության փիլիսոփայության, ժամանակակից փիլիսոփայության, պատմության փիլիսոփայության գիտահետազոտական խմբի վարիչ: 1965–1980-ին համատեղությամբ ԵՊՀ-ում դասավանդել է փիլիսոփայություն, նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմություն, իմացաբանություն, գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն, տրամաբանություն: 1992–1996-ին վարել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Հ. Ա. Գևորգյանի բազմաթիվ հրապարակումները՝ գրքերը, հոդվածները, կոլեկտիվ աշխատությունների բաժինները և այլն, վերաբերում են գիտության փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Հ. Ա. Գևորգյանի բազմաթիվ հրապարակումները՝ գրքերը, հոդվածները, կոլեկտիվ աշխատությունների բաժինները և այլն, վերաբերում են գիտության փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Հ. Ա. Գևորգյանի բազմաթիվ հրապարակումները՝ գրքերը, հոդվածները, կոլեկտիվ աշխատությունների բաժինները և այլն, վերաբերում են գիտության փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

*փայտությանը, մեթոդաբանությանը և տրամաբանությանը, արևմտյան փիլիսոփայության պատմությանը և իմացաբանական ուսմունքների քննական վերլուծությանը, ինչպես նաև պատմության ու մշակույթի փիլիսոփայությանը, հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերին:*

**Ս. Հարությունյան.** Մեծարգո հոբելյար, նախ թույլ տվեք «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրության և բոլոր հայագետ ընթերցողների անունից շնորհավորել Ձեր ապրած վաստակաշատ կյանքի 80-ամյակը և արևշատության ու քաջառողջության հետ մեկտեղ Ձեզ մաղթել տակավին չիրագործված գիտական ծրագրերի հաջող իրականացում: Եվ ապա Ձեզ եմ ուղղում իմ առաջին հարցը. հավանաբար կա փիլիսոփայության և նրա պատմության, տրամաբանության, պատմափիլիսոփայության, մշակույթի փիլիսոփայության առարկայական այս բնագավառների նկատմամբ Ձեր մոտեցումը բնութագրող մի ընդհանուր առանձնահատկություն: Ո՞րն է դա:

**Հ. Գևորգյան.** Փիլիսոփայության մեջ իմացաբանական խնդրակարգը հենց սկզբից եղավ իմ գիտական հետաքրքրությունների առանցքը, և հիմա էլ ես այն հանգուցային եմ համարում փիլիսոփայության և նրա պատմության համար. մասնավորապես՝ իմացաբանական հարցադրումներն ու լուծումներն այն բանալին են, որը հնարավորություն է տալիս «բացելու» և ըմբռնելու Նոր ժամանակի գիտության և փիլիսոփայության դասականների ուսմունքներն ու գիտական մտքի զարգացման ընթացքը՝ սկսած Գալիլեյից, Դեկարտից, Լոկից, Լաբնիցից, Նյուտոնից մինչև Կանտ, Հեգել, Մարքս, մինչև XIX–XX դդ. իմացաբանական, հատկապես նորական-տական ուսմունքները, մինչև բնագիտության, մաթեմատիկայի, փիլիսոփայության դասականները՝ Մախ, Հիլբերտ, Պուանկարե, Ռասել, մինչև գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության և տրամաբանության բնագավառի տեսաբաններ՝ Կառնապ, Պոպեր, Կուն, Լակատոս, Ֆոյերբախ, Մակմալին և ուրիշներ, իսկ մշակույթի փիլիսոփայության և տեսության մեջ՝ Ֆրանց Բոաս և Էռնստ Կասիրեր, որոնց ես մշտապես անդրադարձել եմ նաև հետագայում մինչև հիմա:

**Ս. Հարությունյան.** 1960-ական թվականներին Ձեր աշխատություններով կատարվեց անցումը իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից դեպի գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության և տրամաբանության բնագավառը, որը դարձավ Ձեր ղեկավարած բաժնի հետազոտությունների առարկան և համալիրաբանական ճանաչում բերեց գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության և տրամաբանության հայկական դպրոցին՝ «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» բնորոշ անվանումով: Այս վերնագրով լույս ընծայվեցին երեք պրակներ (1969, 1971, 1974), ընդ որում երրորդ պրակին մասնակցեցին այս բնագավառի մասնագետներ Մոսկվայից և Կիևից, «Փիլիսոփայությունը և գիտության մեթոդաբանական հարցերը» ժողովածուն լույս տեսավ 1977 թ.՝ Անդրկովկասի փիլիսոփաների և տրամաբանների մասնակցությամբ: Այս

ծրագրի տեսական հիմնավորումը և շարադրանքը Դուք տվել եք մի ամբողջ շարք հրապարակումներում («Դիտողություններ գիտական գիտելիքի տրամաբանական-իմացաբանական վերլուծության մասին», «Գիտական գիտելիքի օբյեկտիվության տեսանկյունները», «Գիտական տեսության ձևականացման պրոբլեմը», «Ճշգրիտ փիլիսոփայության ժամանակակից մի քանի տարատեսակությունների մասին» և այլն) և «Հավանական և հավաստի գիտելիք» (ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1965, ռուսերեն), «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ» (1978, հայերեն) գրքերում, գիտական հիպոթեզի վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներում: Հիմա հարց. Ո՞րն է Ձեր այս բազմանիստ ծրագրի հիմքում ընկած հիմնական գաղափարը:

**Հ. Գևորգյան.** *Ծրագիրը ելնում է այն փաստից, որ գիտական տեսությունը տրամաբանական ամբողջական համակարգի տեսքով ներկայացնելու լոգիստիկական իդեալին փոխարինելու եկած՝ «գիտության զարգացման, գիտական հայտնագործության, ապացուցումների և հերքումների տրամաբանության» տեսությունները նույնպես նպատակ ունենին տրամաբանական վերլուծության միջոցով և տրամաբանական կառուցվածքների մեջ գիտական գիտելիքը (և նրա ձեռքբերման ընթացքը) ներկայացնել ճանաչողության սուբյեկտից լիովին օտարված տեսքով: Այնինչ տվյալ ծրագիրը, նկատի ունենալով գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության արդյունքները, այսուհանդերձ ուշադրությունը դարձնում է նրա կիրառության շրջանակներից դուրս գտնվող՝ տրամաբանական էքսպլիկացիայի չենթարկվող (չձևականացվող) կողմերի վրա, որոնք մնում են իմացաբանական վերլուծության առարկա գիտելիքի տեսության մեջ: Վերը թվարկված աշխատություններում այս տեսանկյունից քննության են առնված և վերաիմաստավորված են գիտության փիլիսոփայության համար հանգուցային գիտելիքի ճշմարտության, հավանականության և հավաստիության, օբյեկտիվության և օբյեկտիվացման հասկացությունները, բացորոշ ձևակերպված են գիտելիքի օբյեկտիվության ներգիտական չափանիշները:*

**Ս. Հարությունյան.** Քանի որ խոսքը վերաբերում է գիտելիքին ու գիտությանը, կուզենայի, որ Դուք ավելի մանրամասն ներկայացնեիք գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության այս նեղ մասնագիտական հարցերի Ձեր մեկնաբանության առնչությունները պատմափիլիսոփայության և մշակույթի տեսության՝ ինձ համար հետաքրքրական հարցերի հետ:

**Հ. Գևորգյան.** *Հենց այդ ուղղությամբ գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության խնդրակարգի իմաստավորման քայլը կատարված է իմ «Գիտության պատմական մեթոդաբանության ակնարկ» (1987, ռուսերեն) գրքում, նրան հարող՝ պատմական վերակազմությանը վերաբերող մի ամբողջ շարք հրապարակումներում, մասնավորապես՝ «Պատմական վերակազմության մեթոդը գիտության պատմության մեջ» աշխատության առաջին և երկրորդ գլուխներում: Դրանցում բացահայտված են այն տեսանկյունները, որոնցով գիտությունը ներկայանում է որպես պատմական երևույթ և մշակույթի երևույթ, վերլուծված են այդ գաղափարն արծարծող՝*

*XVIII–XX դդ. փիլիսոփայական և մշակութաբանական տեսությունները, հատկապես քննված է գիտության պատմամշակութային մեկնաբանությունների հետ գիտական գիտելիքի օբյեկտիվության և գիտական ռացիոնալության համատեղելիության վճռորոշ հարցը: Դրանցում հստակեցված է գիտության պատմական մեթոդաբանության ամբողջ խնդրակարգը. գիտությունը ներկայացնել որպես պատմամշակութային երևույթ չի նշանակում գիտությունն ու նրա փոփոխությունների ընթացքը պարզապես դիտարկել պատմության համատեքստում, այն է՝ միմյանց հաջորդող հասարակությունների, մշակույթների, քաղաքակրթությունների համատեքստում, դարաշրջանների հաջորդափոխության մեջ. գիտության պատմական մեթոդաբանության տեսություններում փոխվում է «գիտություն» բուն հասկացությունը. այն դիտվում է որպես պատմական երևույթ ինքնին՝ իր էական հատկանիշներով: Եվ, հատկապես, պատմական են համարվում գիտական գիտելիքի այն հատկանիշները, որոնցով այն սահմանվում (և առանձնացվում) է իմացաբանության (էպիստեմոլոգիայի) մեջ, այսինքն՝ գիտելիքի օբյեկտիվությունը, այն է՝ ճանաչող սուբյեկտից օտարվելու նրա հնարավորությունը, ճշմարտությունը և նրա ձեռքբերումը գիտության զարգացման ընթացքում, ռացիոնալությունը և այն չափանիշները, որոնց համաձայն այն վերագրվում է մարդկային բանականությանն առհասարակ: Այս ամենը համարվում է պատմական, այսինքն՝ եզակի, ուրույն, առանձնահատուկ՝ յուրաքանչյուր դարաշրջանի, քաղաքակրթության, մշակույթի և նույնիսկ՝ գիտելիքի զարգացման յուրաքանչյուր աստիճանի համար: Իհարկե, մենք կարող ենք անտեսել «պատմական պյուրալիզմի» այս մոտեցման ծայրահեղ դրսևորումները, բայց ոչ թե շրջանցել ինքը հարցադրումը: Որոշակի տեսանկյունից դիտվելով որպես յուրաքանչյուր դարաշրջանի, քաղաքակրթության, մշակույթի համար իր եզակի առանձնահատկություններն ունեցող, միանգամայն երևույթ՝ գիտական գիտելիքը դրանով նմանվում է մշակույթի մյուս երևույթներին, ասենք՝ արվեստի գործերին, որոնք ինքնին եզակի, անկրկնելի են, և ոչ թե զարգացման սոսկ մի աստիճանն են, միմիայն մի հերթական օղակը զարգացման շղթայի մեջ. Եվ հիմա խնդիրն այն չէ, որ պետք է հրաժարվել օբյեկտիվ գիտելիքի և գիտական ռացիոնալության իդեալից. խնդիրն այն է, թե ինչպես համատեղել այդ իդեալի հետ գիտության դիտարկումը որպես պատմական և մշակութային երևույթի:*

**Ս. Հարությունյան.** Անցյալ դարի վերջին տասնամյակներում Ձեր գիտական շահագրգռությունների կենտրոնում են գտնվում նաև հայոց պատմությանը և հայկական մշակույթին վերաբերող հարցերը: Ձեր «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (1992, ռուսերեն), «Ազգ. ազգային պետություն, ազգային մշակույթ» (1997, հայերեն), «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ» (2005, հայերեն) գրքերում, պատմական վերակազմության մեթոդին վերաբերող մի ամբողջ շարք աշխատություններում տրված են պատմափիլիսոփայության և մշակույթի փիլիսոփայության հիմնահարցերի նորովի մեկնաբանություններ ու դրանց լույսի տակ քննության են առնված Հայաստանի պատմության, հայ փիլիսոփայության և մշակույթի պատմության հիմնահարցերը, հատկապես՝ ազգին ու ազգային

մշակույթին վերաբերող վիճահարույց խնդիրները: Դա արդյոք պայմանավորված չէ ժամանակակից պատմագիտության հրամայականով, ինչպես և մեր նորանկախ հանրապետության ներքին կյանքի վայրիվերումներով ու միջազգային հարաբերությունների մեջ նրա առջև ծառայած բարդ խնդիրներով:

**Հ. Գևորգյան.** *Ազգի, ազգային մշակույթի և պատմության հիմնահարցերում, անկասկած, հարկավոր է ելնել այն կանխադրույթից, որ հայոց պատմությունը և հայկական մշակույթի պատմությունը պետք է ներկայացվեն ժամանակակից (արևմտյան) պատմագիտական, պատմափիլիսոփայական և մշակութաբանական տեսությունների համատեքստում՝ հաշվի առնելով դրանց հիմքում ընկած ըմբռնումներն ու հասկացության համակարգը, այլապես դրանք ընկալելի և ընդունելի չեն լինի: Մակայն ժամանակակից պատմագիտական, պատմափիլիսոփայական և մշակութաբանական տեսությունները ձևավորվել են եվրոպական երկրների պատմության փորձի ընդհանրացման ու իմաստավորման հիման վրա, ուստի և ունեն առանձնահատկություններ, որոնց կիրառումը հայոց պատմության և հայկական մշակույթի պատմության նկատմամբ առաջ է բերում մի շարք բանավիճային խնդիրներ: Դրանց նորովի մեկնաբանության և լուծման համար խիստ անհրաժեշտ եղան նոր հարցադրումներ ու նոր գաղափարներ պատմափիլիսոփայության, մշակույթի փիլիսոփայության և տեսության մեջ: Դրանցից են՝ իմ «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (1992) գրքում առաջին անգամ մուծված՝ մշակույթի սինխրոնիկ և դիախրոնիկ ամբողջականություն և ազգային մշակույթի պատմական շարունակականություն գաղափարները, ազգային մշակույթի սահմանումը, Էթնիկական մշակույթի և ազգագրական մշակույթի հետ նրա հարաբերության բացահայտումը, մշակույթի ժառանգորդման խնդրի լուծման համար պատմական վերակազմության մեթոդի հնարավորությունների ու կիրառության պայմանների հստակեցումը և այլն: Դրանք հնարավորություն տվեցին հայոց պատմությունը և հայկական մշակույթի պատմությունը ներկայացնելու ժամանակակից պատմագիտական, պատմափիլիսոփայական ու մշակութաբանական տեսությունների լույսի տակ և հերքելու դրանց թյուր մեկնաբանությունները հատկապես քաղաքագիտության մեջ: Նկատի ունենալով պետական կազմավորումների սահմաններում եվրոպական ազգերի ձևավորման փորձը՝ Արևմուտքի հասարակագետները և քաղաքագետներն ազգի կազմավորումը կապում են պետության հետ: Հայ ժողովրդի պարագայում մենք կարիք չունենք վիճարկելու այս դրույթը, եթե նրան տրվի պատշաճ մեկնաբանություն. պետության մեջ, հանրային կյանքի պահանջներին համապատասխան, Էթնիկական-ազգագրական մշակույթի բազմազանության վրա բարձրանում է մշակույթի, այսպես ասած, քաղաքակրթական, արդեն ընդհանրական ձևերի շերտը, որը կազմում են գրական լեզուն, գիրն ու գրչությունը, գրատպությունը, արվեստն ու գրականությունը, փիլիսոփայությունը, գիտությունը, կրթական համակարգը, շինարարական արվեստն ու ճարտարապետությունը, ընդհուպ մինչև հասարակական կյանքի կազմակերպման իրավաքաղաքական ձևերը: Պարտադիր չէ, որ դրանք բոլորը միաժամանակ հանդես գան, դրանց ձևավորումը կարող է պատ-*

մական մի ամբողջ ժամանակաշրջան ընթանալ, բայց կարևոր է, որ ժողովուրդը մուտք է գործում այդ պատմական ժամանակաշրջանը՝ էթնիկական-ազգագրական բազմազանությունից անցում կատարելով դեպի մի ընդհանրություն և մի նոր որակ, որ ազգ է կոչվում: Հայ ժողովուրդը՝ որպես ազգ, ձևավորվելով հնագույն պետական կազմավորումների շրջանակներում, պատմական-քաղաքակրթական յուրաքանչյուր հաջորդ դարաշրջանում իր մշակույթի կարողականությունները ծավալել է ժամանակի մշակութային ձևերի մեջ, այնպես որ Ուրարտական և Այրարատյան թագավորությունների, հելլենիստական ժամանակաշրջանի, վաղ և ուշ Միջնադարի և Նոր ու Նորագույն դարաշրջանի մշակույթները ներկայանում են իբրև միևնույն մշակույթի կոնկրետ պատմական ձևերը՝ կազմելով հայկական մշակույթի դիախրոնիկ ամբողջականությունը: Հնագիտական, աղբյուրագիտական, ազգագրական, պատմական, այդ թվում՝ շինարարական արվեստի ու ճարտարապետության, մատենագրության և ապա՝ տպագրության, փիլիսոփայության, իրավունքի պատմության շարադրանքները փաստում և հավաստում են հայկական մշակույթի պատմական շարունակականությունը Հայկական բարձրավանդակում ու Կիլիկիայում և նրա դիախրոնիկ ամբողջականությունը: Այս հանգամանքի ընդհանուր պատմական նշանակության մի շատ տիպական օրինակ է մ. թ. առաջին հազարամյակում՝ քաղաքակրթությունների հաջորդափոխության ժամանակաշրջանում, հայ մշակույթում, հատկապես փիլիսոփայության մեջ հունա-հելլենիստական և վաղքրիստոնեական ավանդույթի պահպանումն ու նրա փոխանցումը Եվրոպական քաղաքակրթությանը: Այս տիպական օրինակին ես անդրադարձել եմ բազմիցս, տարբեր առիթներով և տարբեր տեսանկյուններից, մասնավորապես՝ Դավիթ Անհաղթի և հայ փիլիսոփայության մեջ նրանով սկզբնավորված ավանդույթի առնչությամբ: Նորապլատոնականության Ալեքսանդրյան դպրոցում, որի ներկայացուցիչն էր Դավիթը, գերիշխում էր արիստոտելյան ռացիոնալ-տրամաբանական վերլուծական միտումը, որը, փոխանցվելով եվրոպական ուշ միջնադար՝ X–XV դդ., նպաստեց տրամաբանության, մաթեմատիկայի, բնափիլիսոփայության զարգացմանը և եղավ մտահայեցողական մետաֆիզիկական փիլիսոփայության իրական այլընտրանքը:

**Ս. Հարությունյան.** Թույլ տվեք ընդմիջարկել և նշել, որ Դուք առհասարակ միշտ կարևորել եք հայ փիլիսոփայության պատմությունը փիլիսոփայության ընդհանուր պատմության համատեքստում քննության առնելու արդիական խնդիրը, որի վերաբերյալ հետաքրքրական դիտարկումներ են պարունակում Ձեր «Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները» ծավալուն հոդվածը, «Ժամանակակից Արևմտյան փիլիսոփայությունը և նրա հնարավոր ազդեցությունը հայ փիլիսոփայության վրա» ակնարկը և ուրիշ հրապարակումներ:

Ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ամբողջական դիմապատկերը սուկ սույն հարցազրույցով բավարարվելիս, անշուշտ, թերի կմնար, ուստի հարկ ենք համարում ընդհանուր ձևով ներկայացնել նրա գիտամանկավարժական և գիտահասարակական արգասավոր գործունեության հիմնական ուրվագիծը:

Հ. Ա. Գևորգյանը կաբինետային փիլիսոփա չէ, իր տեսական գիտելիքները նա ի սպաս է դրել մեր ազգային կյանքի համար արդիական շատ խնդիրների լուծմանը:

Ամենից առաջ նա դասախոս է և հրաշալի դասախոս, ԵՊՀ-ում կարդացել է փիլիսոփայության և տրամաբանության ընդհանուր դասընթացներ, ԵՊՀ-ի փիլիսոփայության ֆակուլտետում՝ հատուկ դասընթացներ՝ «Ժամանակակից իմացաբանական ուսմունքները», «Ժամանակակից տրամաբանական ուսմունքները», «Նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմություն»: Գրել է «Տրամաբանություն» դասագիրք (համահեղինակ՝ Վ. Բաղդասարյան), «Հասարակագիտության հիմունքներ դասընթացի հայեցակարգ և ծրագիր»: Պատրաստել է երկու տասնյակից ավելի գիտության դոկտորներ և թեկնածուներ...

Նա եղել է Հայկական հանրագիտարանի փիլիսոփայության և իրավունքի գիտաճյուղային խմբագրության նախագահ, Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի անդամ է: Հանրագիտարանի համար գրել է շուրջ հարյուր հոդված փիլիսոփայության և տրամաբանության վերաբերյալ:

Եղել է հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր Տերմինաբանական կոմիտեի անդամ, ներկայումս Հայերենի բարձրագույն խորհրդի անդամ է: Եղել է ՀՀ Սահմանադրությունը մշակած՝ Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի անդամ...

Իսկ վերջում ուզում եմ կանգ առնել գիտության, մասնավորապես փիլիսոփայության քաղաքացիականության, փիլիսոփայի քաղաքացիական կեցվածքի և դիրքորոշման վրա, երբ խոսքը վերաբերում է ազգային պատմության և մշակույթի փիլիսոփայության ու տեսության խնդիրներին. լավ իմանալով ժամանակակից արևմտյան տեսությունները և հավատարիմ մնալով պատմական իրողությունների օբյեկտիվ գնահատման չափանիշներին՝ Հ. Գևորգյանը խորամուխ է լինում դրանց էության մեջ՝ բնավ չերկյուղելով «արդիական» ու «եվրոպական» ներկայացող հետազոտողների մոլորությունները ցուցադրելուց և քննադատելուց: Սա հենց գիտական ճշմարտության, գիտելիքի օբյեկտիվության, ռացիոնալության, և կավելացնեի նաև՝ արդարության, իդեալի չափանիշներն են, որ որդեգրել է Հ. Գևորգյանը: Եվ առավել քան կես դար, զինված առաջատար գիտելիքներով, նա խիզախորեն մաքառել և շարունակում է մաքառել հայ ազգային մշակույթի ու պատմության խորագնա և արդարացի գնահատման համար: Կարծում եմ, սա նրա մեծագույն առաքելությունն է, միաժամանակ նաև փիլիսոփա-գիտնականի առաքինությունը իր ժողովրդի պատմության ու մշակույթի հրատապ խնդիրների նկատմամբ, որ պետք է արձանագրվի և մնա նորագույն շրջանի հայագիտության տարեգրության մեջ: